ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2023 թվականի N 1072 - Ա

ԱՐԱՐԱՏՅԱՆ, ՀՐԱԶԴԱՆԻ ԵՎ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱՎԱՋՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՊ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի «Արարատյան, Հրազդանի և Ախուրյանի ավազանային կառավարման տարածքներում սակավաջրության և երաշտի մասին» N 1111-Ն որոշման դրույթներով՝ 2023 թվականի սակավաջրության ազդեցությունը մեղմելու համար հրատապ աշխատանքներ սահմանելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Արարատյան, Հրազդանի և Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքներում 2023 թվականի սակավաջրության ազդեցությունը մեղմելու համար հրատապ աշխատանքները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի, Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի մարզպետների հետ համատեղ՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2121-Ն որոշմամբ հաստատված կանոնների 24-րդ կետի համաձայն՝ սույն որոշման 1-ին կետով նախատեսված տարածքներում կիրառել ջրախնայողության ռեժիմներ, նորմեր և առաջնահերթ ջրօգտագործման կարգ՝ վերանայելով ոռոգման ռեժիմներն ու նորմերը, անհրաժեշտության դեպքում, նախատեսելով ոռոգելի հողատարածքներում մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ընտրության, երկրորդ և երրորդ վեգետացիայի մշակաբույսերի մշակման սահմանափակումներ: Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում վերանայել այդ տարածքներում ոռոգման ջրապահանջարկի ծավալները՝ վերջիններս համապատասխանեցնելով ոռոգման համակարգերի եղած ջրային պաշարներին.

2) սույն որոշման 1-ին կետով նախատեսված տարածքներում՝ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող համայնքներում, իրականացվելիք երկրագործության և ոռոգման միջոցառումները կազմակերպել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 15-ի N 654-Ն որոշմամբ հաստատված ծրագրի առաջարկություններին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահին՝ «Ձրառ» փակ բաժնետիրական ընկերության և «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության հետ համատեղ Արաքս գետում, ներկայացված ոռոգման հայտերը գերազանցող ջրաքանակի առկայության պարագայում, Սև ջրի ստորերկրյա ավազանին լրացուցիչ սնում ապահովելու և հաշվեկշիռն ավելացնելու նպատակով իրականացնել ջրալրում:

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում սակավաջրության կանխարգելման ու հետևանքների մեղմացման երկարաժամկետ միջոցառումների ծրագիր:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ